ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

"02" Դեկտեմբեր 2023 թվական N 422-Ա

ք. Երևան

««1043 ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ, ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ԾՐԱԳՐԻ «11007 ՇՈՒԿԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ»» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման 13-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2023 թվականի ««1043 Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի, թվայնացման և շուկայի զարգացման ծրագիր» ծրագրի «11007 Շուկաների զարգացում և միջազգային համագործակցություն»» միջոցառման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանին:

ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
« 02 » մարտի 2023թ. Թիվ422-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

«««1043 ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ, ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ԾՐԱԳՐԻ «11007 ՇՈՒԿԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ»» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ

1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԱՂԱՎԱՐՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒՄ

1.Նշյալ միջոցառման շրջանակներում Նախարարության կողմից ընտրվում են ոլորտային միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներ և աջակցություն է ցուցաբերվում հայկական ոլորտային ընկերություններին և միություններին դրանցում ներկայանալու համար:

2.Միջազգային ցուցահանդեսներին հայկական ընկերությունների միասնական տաղավարով մասնակցության աջակցությունը պայմանավորված է նախ և առաջ հայկական ապրանքանիշերի, ընկերությունների ճանաչելիության զգալի պակասով, ինչը խանգարում է միջազգային շուկաներում առաջխաղացմանը:

3.Ցուցահանդեսներին մասնակցությունը առավելապես նպաստում է ընկերությունների՝

1) միջազգային շուկաները հետազոտելուն և առաջարկվող ապրանքներն ու ծառայություններն ավելի մրցունակ դարձնելուն,
2) նոր միջազգային գործընկերներ (ներառյալ մատակարարներ) գտնելուն,
3) նոր շուկաներ դյուրին մուտք գործելուն,
4) վաճառքների ավելացմանը և ընկերությունների զարգացմանը:

4.Նախարարությունը պատասխանատու է ցուցահանդեսի կազմակերպչից միասնական տաղավարի տարածքի վարձակալության, տաղավարի դիզայնի նախագծման, կառուցապատման աշխատանքների համար:

5.Ցուցահանդեսներին մասնակցության արդյունքները մշտադիտարկվում են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության շուկայի զարգացման վարչության կողմից ցուցահանդեսին հաջորդող 1 (մեկ) տարվա ընթացքում: Ցուցահանդեսից վերադառնալուց հետո՝ երկշաբաթյան ժամանակահատվածում, տեղեկատվություն է հավաքագրվում ձեռք բերված նախնական պայմանավորվածությունների մասին, այնուհետև 6-ամսյա պարբերությամբ՝ պարտադիր հաշվետվություններ են հավաքագրվում ընկերություններից:

6.Նախարարությունը կարևորում է միջոցառումների մասնակից ընկերությունների արդար և թափանցիկ ընտրությունը: Մասնակից ընկերությունների ընտրության կարգը իրականացվում է

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2021 թվականի մարտի 16-ի «Միջազգային ցուցահանդեսներին հայկական միասնական տաղավարում ներկայացվող ընկերությունների գնահատող հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 218-Ա հրամանով:

7.Նախարարությունը յուրաքանչյուր միջոցառման թափանցիկությունն ապահովելու նպատակով իրազեկում է հանրությանը՝ (պաշտոնական կայք էջով, սոցիալական հարթակներով, հանրային լրատվական այլ հարթակների կամ համապատասխան միությունների միջոցով) այդպիսով ոլորտային ընկերություններին միջոցառմանը մասնակցելու հավասար հնարավորություն տալով:

8.Միաժամանակ յուրաքանչյուր անգամ Նախարարի հրամանով ստեղծվում է գնահատող անկախ մասնագիտական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ կազմված Նախարարության ներկայացուցիչներից և համապատասխան ոլորտային միությունների, մասնագիտացված կազմակերպությունների կողմից ներկայացված թեկնածուներից: Հանձնաժողովն իր հերթին ուսումնասիրում է բոլոր հայտերը, դիտում դիմորդների ներկայացումները, գնահատում դրանք և իրականացնում ընտրություն հայտատուների միջև: Յուրաքանչյուր ցուցահանդեսի համար, ըստ անհրաժեշտության, կարող են մշակվել ընտրության առանձին չափանիշներ: Ցուցահանդեսին մասնակցելու համար նախատեսված սահմանված թվին համապատասխան առավել բարձր միավորներ ստացած ընկերությունները համարվում են սահմանված չափանիշներին բավարարող ընկերություններ:

9.Ցուցահանդեսին մասնակցելու համար սահմանված չափանիշներին բավարարող ընկերությունների վերաբերյալ եզրակացությունը հաստատվում է Հանձնաժողովի նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ և կցվում արձանագրությունը: Նիստի արձանագրությունն ու Հանձնաժողովի որոշումները ստորագրվելուց հետո ներկայացվում է Նախարարին:

10.Ընտրված ընկերությունների հետ Նախարարությունը կնքում է միջազգային ցուցահանդեսում հայկական միասնական տաղավարում ներկայացվող ընկերությունների մասնակցության մասին պայմանագիր:

11.Ընտրված կազմակերպությունների նախապես սահմանված թվով ներկայացուցիչներին ընկերության արտադրանքն ու ծառայությունները ներկայացնելու համար տրամադրվում են միջոցառման մուտքի տոմսեր (բեյջեր), առանձնացված տարածք միասնական տաղավարում:

12.2023 թվականին ՀՀ պետական բյուջեով միջոցառման իրականացման համար նախատեսված է 300,000.0 հազ. ՀՀ դրամ:

13.Միջոցառման 2023 ֆինանսական միջոցների պլանային բաշխվածությունը ներկայացված է ստորև:

Հ/Հ	Միջոցառման անվանում	Ժամանակահատված	Ընդհանուր բյուջե հազ. ՀՀ դրամ

1	IDEX 2023	20-24 փետրվար, 2023	39,954.0
2	Expo Electronica 2023	11-13 ապրիլ, 2023	14,802.0
3	Viva-Tech 2023	14-17 հունիս, 2023	40,881.0
4	Digitec 2022	10-12 մարտ, 2023	23,842.0
5	EDEX 2023	4-7 դեկտեմբեր, 2023	70,327.0
6	CES 2024	Հունվար, 2024	13,765.0
7	MWC 2024	Փետրվար, 2024	25,708.0
8	Viva-Tech 2024	Հունիս, 2024	41,061.0
9	IAC 2024	Հոկտեմբեր, 2024	15,660.0

2.ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՐԿԿՈՂՄ ԲԻԶՆԵՍ ՖՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

14.Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտի ընկերությունների զարգացման խթանման մեկ այլ միջոցառում է գործարար ֆորումների կազմակերպումը: Միջոցառման շրջանակում նպատակադրվում է հանդիպում-քննարկումներ կազմակերպել հայկական և արտերկրյա ընկերությունների միջև նպատակ ունենալով՝

1)հայկական ընկերություններին ծանոթացնել ոլորտային միջազգային զարգացման միտումներին,

2)վեր հանել համագործակցության հնարավորությունները և նպաստել դրանց ձևավորմանն ու զարգացմանը:

15.2023 թվականի ընթացքում ծրագրվում է կազմակերպել 3 գործարար ֆորումներ՝ նախատեսելով 1,200 հազ. ՀՀ դրամ ֆինանսական միջոցներ:

16.Հաշվի առնելով վերոնշյալ նպատակները՝ ծրագրի գնահատման ցուցանիշները թվարկված են ստորև:

ՑՈՒՑԱՆԻՇ	ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ
Միջազգային ցուցահանդեսների մասնակցություն «Հայաստան» տաղավարով, հատ	3
Հայաստանում կազմակերպվող ցուցահանդեսների, ֆորումների քանակը, հատ	1
Միջազգային ցուցահանդեսներին, ֆորումներին մասնակցության արդյունքում կնքվող պայմանագրերի քանակը, հատ	մինչև 4
2023 թվականի միջազգային ցուցահանդեսներին մասնակցության կանխավճար	2

3.«Տիեզերական ճամբար 2023»

17.«Տիեզերական ճամբար» ծրագիրը տիեզերքի բնագավառի ճամբար է, որը հնարավորություն է տալիս պատանիներին ծանոթանալու տիեզերական ոլորտի տեխնոլոգիաներին և դրանց ընձեռած հնարավորություններին:

18.Ծրագրի շրջանակում ոլորտային հեղինակավոր մասնագետների դասախոսությունները, աշխատարանները, աստղադիտումներն ու կինոդիտումներ օրակարգի անբաժանելի մաս են:

19.Ծրագիրը յուրօրինակ հնարավորություն է պատանիների ընդհանուր զարգացման և մասնագիտական կողմնորոշման համար այն տալիս է տեսական և գործնական գիտելիքներ, մասնագետների հետ ուղիղ շփման հնարավորություն, նման աշխարհայացքով ունեցող ընկերների ձեռք բերելու միջավայր:

20.Ծրագիրն առաջին անգամ անցկացվել է 2021 թվականին: 2021 թվականին օգոստոսի 28-ից սեպտեմբերի 1-ը ծրագիրը տեղի է ունեցել Լոռվա COAF SMART կենտրոնում, որին մասնակցել են 2020-2021 թվականների ուսումնական տարվա ընթացքում ֆիզիկա, ինֆորմատիկա, աստղաֆիզիկա և մաթեմատիկա առարկաներից միջազգային և հանրապետական օլիմպիադաներին մեդալներ և 1-3-րդ կարգի դիպլոմներ ստացած ավագ դպրոցի աշակերտներ, COAF կենտրոնի ռոբոտատեխնիկայի և ծրագրավորման, Ջավախքի «Արմաթ» խմբակների լավագույն սաները:

21.2022թ հուլիսի 27-ից օգոստոսի 2-ը Դիլիջանի Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանում կայացել է գիտակրթական 2-րդ հավաքը, որին մասնակցել են պատանիներ Հայաստանի մարզերից, ԱՄՆ-ից, Պաղեստինից, Վրաստանից և ՌԴ-ից: Մասնակցության դիմում ներկայացրած շուրջ 1000 պատանիներից, թեստային առաջադրանքի արդյունքներով, ընտրվել են առավելագույն միավորներ հավաքած 100 լավագույնները:

22.Միջոցառման շրջանակում նախատեսվում է 15-17 տարեկան երեխաների շրջանում տիեզերական բնագավառի 7-օրյա ամառային ճամբար անցկացնել՝ ներգրավել տիեզերական և հարակից ոլորտներում գործող ընկերությունների և մասնագետների մասնակցությամբ: Ճամբարի մասնակից երեխաները ընտրվելու են համապատասխան հարթակի օգնությամբ առցանց կազմակերպվող քննության արդյունքներով:

23.Ծրագրի շրջանակում պլանավորվում է ՀՀ և սփյուռքի հայազգի 100 երեխաներին ներկայացնելու տիզերական ոլորտն ու դրա ընձեռած հնարավորությունները, ինչպես նաև ոգեշնչելու նրանց ՀՀ-ում ներգրավվելու տիեզերական գործունեության և հարակից տեխնոլոգիական ոլորտներում:

24.«Տիեզերական ճամբար 2023» ծրագրի համար նախատեսված է 14,000.0 հազ. ՀՀ դրամ: